

լով միշտ աջ ոտից: Իւրաքանչիւրի ոտը լուսնալուց յետոյ խոնարհուում էր և համբուրում, կամ ձեացնում թէ համբուրում է: Մի քանի փոփոխութիւնով ձգուում էին տաշտի մէջ՝ իրր վարձատրութիւն: *Հոգեւորական իւրաքանչիւրի ոտը լուսնալուց յետոյ խոնարհուում էր և համբուրում, կամ ձեացնում թէ համբուրում է:*

Գրկնորոտայ.—Պսակից մի շարաթ յետոյ հարսի սանից մի կին վերցնելով մի որևէ զարդ և սապոն, սանը ու սրբիչ, գալիս էր հարսի մօտ, զարդը նուիրում նրան, և գլուխը լուսնուում, սանրում: Հարսի սկեսուուն էլ իւր կողմից մի ընծայ էր տալիս այս կնոջը: Այս սովորութիւնն էլ այժմ վերացել է:

Մի քանի շարաթից, երբեմն նաև ամիսներից յետոյ մի կնոջ առաջնորդութեամբ բերւում էր հարսի օժիտը: Նոյն օրը հրաւիրում էին մօտիկ ազգականներ, որոնց մի առ մի ցոյց էր տրւում այդ օժիտը:

ՏՂԱԲԵՐԷ ԵՒ ԿՆՈՒՆԸ

Ամլութիւն. — Գողթնում ևս ամլութիւնը մեծ վիշտ է պատճառում և աստուածային պատիժ է համարւում, ուստի և՛ ոչ միայն բժիշկներէ, այլ և սրբերի օգնութեան են դիմում երեխայ ունենալու համար: Շատերը ուխտ են գնում Դաստա, այժմ թրքաբնակ, գիւղի Քեշիշի (քահանայի) գերեզմանին, նրա հողից ածում իրենց վրայ, ուրիշներ նոյն իսկ ոտաքորիկ գնում են Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ և այլ ուխտատեղիներ, ուր երեխայ ունենալու վառ ցանկութիւնը ազօթքով յայտնելուց յետ՝ մասունքի վրայից մի մատանի են գողանում, խոստանալով, որ եթէ սուրբը կատարէ իրենց խնդիրը և երեխայ տայ՝ ոչ միայն այդ մատանին յետ կրբերեն, այլ և մի խաչ կընծայեն: Եւ յիշաւ, երբ երեխայ են ունենում, դռնէ դուռ են ընկնում, մուրում և ստացած գրամով մի արծաթէ շղթայ և մի փոքրիկ խաչ շինել տալիս, կախում երեխայի վզից: Երբ վերջինս 3—4 տարեկան է դառնում, այդ շղթան ու խաչը հալել և մի մեծ խաչ են շինել տալիս, ու գողա-

ցած մատանու նման մի մատանի և երեխայի բարձրութեան երկու մոմ առած՝ երեխայի հետ դնում են ուխտատեղին, ու իրենց շնորհակալութեան աղօթքը անելուց յետոյ մոմերը վառում են ու մատանիներն ու խաչը կապում մասունքից:

Յղութեան միջոցին կանանց բոլոր քմահաճութիւնները կատարում էին և այժմ էլ կատարում են. ինչ էլ որ ցանկանայ ուտել՝ ինչ էլ որ լինի նրա «սըրտըղելիք»-ը՝ անշուշտ գտնում տալիս են:

Բայց երբ չափից անցնում էին նրա պահանջները՝ մի առաւօտ վաղ դնում էին և եօթը տնից եօթ տեսակ կերակուր հաւաքում և բոլորը մի սկուտեղի վրայ զրած բերում դնում էին յղի կնոջ առաջը և մէջքին թեթեւութեամբ խփելով ասում. կեր կշտացիր:

Միկնոյն ժամանակ հաւատալով, որ երեխան արզանդում խաղալիս մայրը ում դէմը որ կանգնած լինի՝ երեխան նրան բնաւորութիւնը կստանայ, աշխատում էին լաւ մարդկանցով շրջապատել նրան:

Յղի կանայք իրենց պաշտպան համարում էին կիրկամուտ, չրրբշրրթամուտ, ըրրթամուտ ոգիները, ուստի և նրանց պատուի համար շարաթ, երեքշաբթի և հինգշաբթի երեկոները չէին աշխատում և առագաստ չէին մտնում:

Ծննդեան օրերը մօտենալիս երկիւղ կրելով, թէ մի դուցէ չկարողանան ազատուիլ, հաղորդւում էին:

Երկունքի ժամանակ հրաւիրում են տատմօրը և, եթէ առաջին ծնունդն է, ծննդկանի մօրը:

Սովորաբար պարկած են ազատւում, ոմանք էլ կանգընած կամ չոքած:

Ծնունդը հեշտացնելու համար դիմում են հետեւեալ միջոցներին.

Աղ ու հաց են մօտեցնում ծննդկանին, որի վրայ սա դնում է ձեռքը և պատուիրում տանել աղքատներին տալ: Ենթադրելով, թէ ծննդկանը սհոտ է առել, այսինքն

մի որեւէ ուսուիրիքի հոտ է առել, ցանկացել է ուսուել, բայց չեն գտել, ուստի և գերեխան չի ծնւում, տառերի գրութիւն, ձուր կեղեւ, վագի փայտ և գինի խառնում են իրար, վառում և ծուխը թողնում ծննդկանի շապկի տակ, որպէսզի գերեխան հոտն առնի՝ դուրս գայ։

Աւագ ուրբաթ գիշերը առանց խօսելու շինուած մատանի են ձգում ծննդկանի մատը, որպէսզի չարերը հալածուին և նա հեշտութեամբ ազատուի։

Մով անցած կամ գուգաւորուած օձերը միմեանցից բաժանած մարդը իւր փէշով ջուր է տալիս ծննդկանին խմելու։

Եթէ ծննդկանը ուշագնաց էր լինում՝ հրացան էին արձակում, և երբ ուշքի էր գալիս՝ մի մեծ բեւեռ էին մեխում ուշագնաց եղած տեղում։

Երբ ծննդկանը ազատւում էր, նրան պարկեցնում էին տաք մօխրի վրայ, վերան վերմակով ծածկում։ Յետոյ տատմայրը, պարրակըտրի՝ է պահանջում և միջանի կոպէկ նուէր ստանալով կտրում է երեխայի պորտը, որ տանում ձգում են եկեղեցում, որպէսզի երեխան ժամատէր լինի, թաղում են տան մի անկիւնում՝ որպէսզի տնարար լինի։ Ընկերքն էլ չոր տեղումն են թաղում, որպէսզի երեխայի աչքերը չնպռտի։ Յետոյ տատմայրը լողացնում է երեխային, ազ ցանում վերան, փաթաթում խանձարուրի մէջ և դնում ծննդկանի աջ կողմը, խրատելով վերջինիս, որ շարունակ աջ կողքի վրայ պարկի, որպէսզի հետեւեալ ծնունդը արու լինի։ Ապա հոգատար տատմայրը մի սոխ էր անցկացնում մի շամփուրի վրայ և սկսում պատերին դանազան պատկերներ նկարել։ Մինը գիտմամբ հարցնում էր թէ ի՞նչ է անում։ Նա էլ լրջութեամբ պատասխանում էր, թէ Աստուածածնայ պատկերն է նկարում, որպէսզի չարը չհամարձակուի ներս մտնել։ Պատկերը նկարելուց յետոյ՝ շամփուրը դնում էր ծննդկանի բարձի տակը, ուր շատ անգամ դնում են նաև Կիպրիանոս, դաշոյն և այլն, որպէսզի չշարերբը չմօտենան։

Այս բոլորից յետոյ հրաւիրում են քահանային, որ զայս տունը փարատէ։ Սա օրհնում է ջուրը և շաղ տալիս ծննդկանի, անկողնի, սենեակի պատերի վրայ։ Այս օրհնումած ջրով ծննդկանը լուանում է իւր ծծերը և ապա ծիծ տալիս նորածնին։ Այս ւժիարատմամբ հեռացնում են չար ոգիներին, բայց չեն սրբում ծննդկանին, որ պիղծ է համարւում մինչև երեխայի մկրտութեան օրը, այնպէս որ նրան առանձնացնում են, նրա զործածած ամաններն ու շորերը ջրկում, առանձին պահում, թոյլ չեն տալիս ձեռք տալ ոչ մի բանի, որ իրեն չի յատկացրուած։

Սկսելով խնամել ծննդկանին, նախ և առաջ մի բաժակ ձէթ էին խմացնում, որպէսզի նրա «մէջքը պլնդ լինի», յետոյ խաւիժ էին տալիս, (զանճաֆիլով) թէյ խմացնում։ Սովորաբար նրան տալիս էին ուտելու ճրլմբուռ, շրջրուայնգ, և ադաձու (եղաձու)։ Այս կերակրողները մեծ մասամբ բերում են բարեկամ կանայք, որ տեսութեան զալով շնորհաւորում են որդեծնութիւնը։ Տատմէրը երեխային վերցնում է և դնում այցելուի գիրկը՝ յուսալով միքանի կռպէկ նուէր ստանալ։ Այս այցելուներն զգուշանում են, որ իրենց վերայ ոսկէ դրամ կամ ոսկէ զարդ չուենան, այս թէ ոչ՝ երեխան գեղնուց կարող է ըստանալ։ Այսպիսի անզգուշութիւնից յառաջացած դեղնութիւնը բժշկելու համար վերցնում էին այդ ոսկէ դրամը կամ զարդը, դնում տաշտի մէջ և երեխային նրա վրայ լողացնում։

Թէ ծնողները և թէ բոլոր այցելուները աւելի մեծ ուրախութիւն են արտայայտում երբ նորածինը արու է։

Մկրտութիւն.—Սովորաբար նորածնին մկրտում են ծննդեան եօթերորդ օրը, թէպէտ և պատահում է աւելի ուշ, երբեմն նոյն իսկ մի տարի յետոյ։ Մկրտութեան նախորդ օրը տատմէրի ձեռքով շէկնալուսիկն են ուղարկում քաւորին, խնդրելով զալ երեխան մկրտելու։ Կնքալուսիկը բաղկացած էր լինում չորս խնձորից, մի փունջ ծաղկից և մի կուժ գինուց։

Մկրտութեան օրը տատմայրը պատրաստուելով լողացնել երեխային, հրաւիրում է տնեցիներին, որ դրամ ձգեն տաշտի մէջ իրը վարձատրութիւն նրա կրած աշխատանքի: Ապա մի պողպատ է դնում տաշտի մէջ, որպէսզի չչարերը հալածուեն, որովհետեւ նրանք սաստիկ վախենում են պողպատից, տաք ջրով լողացնում երեխային և փաթաթում՝ եթէ առջինէկ է՝ նրա տատի ընծայ բերած խանձարուրի մէջ: Միքիչ յետոյ ինքը վերցնում է երեխային, խոսի մի ուրիշ կին մի աման տաք ջուր և մի Էկնքակրտով (կնկուղ) և գնում եկեղեցի: Այստեղ դալիս է նաև քաւորը, երկու մօմ, և սանամօր համար մի որևէ ընծայ՝ դիխի փաթաթան կամ մի այլ բան, և մի սաւան առած: Քահանան կատարում է մկրտութեան խորհուրդը և երեխային տալով քաւորի գիրկը, ինքը շուրջառը վերան ձգած, մի փոքրիկ զանդ ձեռին, Լոյս ի լուսոյ շարականն ասելով առաջնորդում էր ծննդկանի տունը: Երբ մօտենում էին՝ քահանան սկսում էր զանգահարել՝ ծննդկանը և բոլոր ներկայ եղողները ոտի էին կանգնում: Քաւորը ոտը դրնում էր մի բարձի վրայ և սանամայրը խոնարհելով համբուրում էր ու վերցնում երեխային, դնում իւր աջ կողմը: Այժմ այլևս ոտը չեն համբուրում, այլ երեխայի խանձարուրը: Երբ աւարտուում էր մկրտութեան խորհուրդը, բոլոր ներկայ եղողները համբուրում էին քահանայի ձեռին բռնած աւետարանը և խաչհամբոյր տալիս: Անմիջապէս քահանան և քաւորը նստում էին ծննդկանի մօտ և օդի խմելով ձուածեղ ուտում, որպէսզի երեխան լացկան չլինի¹⁾: Ապա գնում էին միւս հանդիսականների մօտ, որոնք յատկապէս հրաւիրուած էին լինում, և ճաշում էին:

Ներքին Ազգութեան քաւորը կնքալուսիկն ստանալուց յետոյ ոչխարի մի բուդ (հում) և մի կում գինի, և կամ մի թթաբախ՝ էր ուղարկում սանամօրը: Թաբախ-ի մէջ դրուած էր լինում մի շիշ օդի, մի ափսէ հրեշակ, վերան կարմիր ձուեր շարած, մի տապակած հաւ, մի սրճա-

¹⁾ Տէր Յակոբի տեղից:

ման ժիրով (մեղրով ու կոճապղպեղով պատրաստած թէյ՝ ծննդկանի համար), և կոճապղպեղի փոշի. վերջինս ուղարկւում էր նրա համար, որ կանայք քաւորի կենացը խմելիս այդ փոշուց ածէին գինու բաժակի մէջ¹⁾, կնուսքի ճաշի ժամանակ այս թթապախը բերում և ցոյց էին տալիս հանգիստականներին, իսկ ճաշի աւարտին՝ ծննդկանի կողմից ևս մի թապախ էին բերում և դնում քահանայի առաջ: Սրա մէջ դրուած էր լինում երկու խնձոր կամ սերկելիլ և կամ նուռ, վերան մի թաշկինակ՝ ծայրին կապած այնքան դրամ, որքան կարժենար քաւորի բերած սաւանը և ընծան: Քահանան վերցնում էր մրգերից մինը, դնում իւր գրպանը, իսկ թապախը տալիս քաւորին:

Մկրտութեան հետեւեալ օրը ժողովուրդին էին անում առանց մի որևէ առանձին ծիսակատարութեան լողացնում էին երեխային և մեռնաձուլն ածում թոնիրը կամ գետը:

10—15 օրից յետոյ ծննդկանը վեր է կենում անկողնուց, զգուշանալով, որ մինչև քառասներորդ օրը արևի երես չտեսնի, սեամից էլ անցնելիս ծայրին սոխ ցցած շամփուր առնի ձեռքն, որ սշարերը չխփեն:

Քառասունքին բարեկամ կանայք հաւաքւում են ծննդկանի տանը, և երեկոյեան ժամասացութեան ժամանակ ծննդկանին առաջնորդում եկեղեցի. տառմայրն էլ երեխան գրկին հետևում է նրանց, տանելով նաև մի եփած վառելի, 2—4 հատ գաթայ, մի հաց և մի շիշ գինի: Ժամասացութեան աւարտին քահանան եկեղեցում կատարում է քառասունքի ծէսը, և ժամուորների հեռանալուց յետոյ եկեղեցու սպասաւորների հետ ուտում վառելիք, որ նշանակ է ս. Աստուածածնի տաճարին ընծայած տաարակին:

Մանկատաժութիւն. — Որպէսզի երեխան չը կոխուի, շըլով շընկնի, (նիհարի և մեռնի), ծննդաբերութիւնից յետոյ առաջին անգամ հայրը տուն գալիս երեխային վերցնում են, ընդառաջ տանում և դնում նրա աջ ուսին և այդպէս ներս բերում: Նաև մինչև քառասունքը երեխային

¹⁾ Այս բաժակը կոչւում էր տխտղաթոս-պղպեղի բաժակ:

բարձրացնում են տեղից և դուրս տանում երբ մեռել են անցկացնում տան մօտից և միս են բերում տուն: Իսկ եթէ չեն զգուշացել և երեխան կոխուել է՝ եթէ մեռելից է՝ մի ուրիշ մեռելի տակից անց են կացնում, իսկ եթէ այս կամ այն մարդուց՝ զնում նրա տան կտրանք միզում են:

Չնայելով, որ հաւատում էին, թէ շատ ծիծ տան՝ բթամիտ կրկնի երեխան, այնուամենայնիւ 2—4 տարի ծիծ էին տալիս: Սակաւ կաթ ունեցողները փշառ փրշում էին, կաթի մէջ շաղախում և ուտեցնում: Շատ անգամ էլ խաշխաշ էին ուտեցնում, որ երկար քնի, կաթ չուզէ:

Ծծից կտրելիս ծծի վրայ կուպը էին քսում, և ցոյց տալով երեխային ասում. «Քրիս ա՛» (վատ է): Նոյն նպատակով մի կարմիր ձու էին դնում կժի բերանին, և երբ երեխան ծիծ էր ուզում, ցոյց էին տալիս ձուն և ասում. «Ի՛նչ դնա վեր առ»:

Աղջիկ ունեցողի կաթը իբր դեղ դործ էին ածում: Բամբակը թրջում էին այդ կաթի մէջ և դնում ցաւոց աչքերի վեայ:

Ատամ հանելիս սոխ էին տալիս ձեռք, որ կրծի, քորը կտրուի. դուխն էլ յանախ լուանում էին:

Եթէ նախ վերին ծնօտի վրայ ատամ դուրս գար, ասում էին, թէ սա «մարդու դուխ է ուտելու» — տանից մինը մեռնելու է:

Երեխայի եղունգներն ու մազերը չէին կտրում, ոչ էլ սանրում, որպէսզի «աստամները միմեանցից հեռու դուրս չգային»:

Երեխային ձու չէին ուտեցնում, որպէսզի ուշ լեզու չենի. և եթէ ուշ էր սկսում խօսել, բերում էին եկեղեցու դռան բանալին և երեխայի լեզուն անցկացնում նրա կոթի ծակի մէջ, որ շուտով լեզու ելնէ:

Եթէ ուշ էր սոս ելնում, Յոնայում տանում էին ճրդ-նաւորի քարի անցքով երեք անգամ անցկացնում: Մկրատ

ձգելով իմանում էին, թէ որ սրբիցն է և այն սրբի դուռը տանում երեխային, մատաղ անում:

Եթէ երեխան չէր քնում, վախեցնում էին, որ քնի. Օլը (այլը) ահալ ա, քունը բլի: Կուլի կուլին (շունը) ահալ ա, քունը բլի:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Զօկերի ընտանեկան կեանքը ուշադրու է առաւելապէս նրանով, որ նա ներկայացնում է նահապետական կեանքից ընտանեկան կեանքի անցողական շրջանը: Զօկ ընտանիքն այլևս կաշկանդուած չէ նահապետական գերդաստան բռնակալական շղթաներով, սակայն և՛ հասած չէ անհատական ազատութեան: Զօկ կինը թէև գերդաստանի ստրուկը չէ, բայց և՛ ամուսնու հաւատարմութեամբ չէ, թէպէտ և նա ազատուած է ազանձնացած, փակ կեանքից, բայց և այնպէս դեռ ևս լիովին չի ընտելացել տղամարդկանց հասարակութեանը, նա սրանց մէջ մի առանձին խումբ, մի առանձին շրջան է կազմում, նրանց ընդհանուր խօսակցութեան չի մասնակցում: Միշտ նկատելի է, որ մի վիճ բաժանում է այս երկու սեռի էակներին, թէպէտ և այն ևս զգալի է, որ այդ վիճն արագութեամբ փոքրանում է:

Զօկ կինը տղամարդու պէս՝ աւելի մտքի, քան զգացմունքի էակ է, նրա մէջ աւելի խելքը քան սիրտն է զարգացած: Մտքի զարգացմամբ նա իրեն պահել գիտէ և կարող է յարմարուիլ տմէն շրջանի ու հանգամանքի. նա ամենայն արագութեամբ ընդունում է իրեն շրջապատող քաղաքակրթութիւնը, շատ հեշտութեամբ սովորում է լեզուներ, հեշտութեամբ ըմբռնում է իւր ամուսնու առևտրական ձեռնարկութիւնների ոգին և նրան խորհրդատու է հանդիսանում: Նա նաև լաւ տանտիկին է, խնայող, որ, սակայն, ոմանց մէջ չափազանցութեան է հասնում, անտես, նրա մասանը միշտ լի է զանազան, նրան ձեռքով պատրաստուած պաշարեղէնով, բանուածքներով և այլն: Նրա աշխատասիրութիւնն այն աստիճանի է հասնում, որ ամենատարուած տներումն անգամ խոհանոցի տնօրոջ հոգաւ նրա վրայ է ընկած:

Զօկ կնոջ մի գովելի յատկութիւնն էլ նրանումն է կայանում, որ նա միանգամայն ըմբռնելով ուսման կարևորութիւնը, ամենայն կերպ աշխատում է իւր որդիներին ուսման առաջ: Զօկ կնոջ պարծանքի առարկան, նրա նախանձի շարժառիթը՝ որդիների կրթու-